ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **29/12/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա էին՝ Էմիլ Հարությունյանը, Գոռ Գալստյանը, Նազիկ Հարությունյանը (որոնք իրենց բացակայության պատճառի մասին չէին տեղեկացրել) և Գևորգ Պողոսյանը (ավագանու նիստի ժամանակ խմբակցության ղեկավար Պավել Ցուգունյանը տեղեկացրեց, որ Գևորգ Պողոսյանը բացակայում է վատառողջ լինելու պատճառով):

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի առաջին նստաշրջանի հերթական երրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին.
2) Աբովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին.
3) Աբովյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և վարչական ղեկավարների նստավայրերը որոշելու մասին.
4) Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալների, հայեցողական և վարչական պաշտոնների քանակը սահմանելու մասին.

5) Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին.
6) Դավիթ Զարոյանին Աբովյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակելու մասին.
7) Նիկոլայ Աբրահամյանին Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին.
8) Արթուր Մովսիսյանին Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին.
9) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը տեղեկացրեց, որ ավագանու մշտական հանձնաժողովներ ձևավորելու համար «Հանրապետություն» խմբակցությունը հանձնաժողովներում ընդգրկելու համար չի ներկայացրել հանձնաժողովների անդամների թեկնածուներ, որի արդյունքում չեն համալրվում երեք հանձնաժողովների կազմերը և առաջարկեց կա՛մ հանձնաժողովները համալրել «Բարգավաճ Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների անդամներով, կա՛մ «Աբովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին» որոշման նախագիծը հանել օրակարգից, տեղափոխել հաջորդ նիստ և հնարավորություն տալ, որպեսզի «Հանրապետություն» խնբակցությունը ներկայացնի հանձնաժողովների անդամների թեկնածուներ:
Օրակարգի նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում ներառված «Աբովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին» որոշման նախագիծը հանվեց օրակարգից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Աբովյան համայնքի ավագանին
որոշում է՝
1. Ընդունել Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեղ հարցը և նշեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն համայնքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը, որով կարգավորվում է ավագանու աշխատանքային գործունեությունը և ներկայացրեց կանոնակարգի հիմնական կարևոր դրույթները:
Ավագանու անդամների կողմից հարցեր հնչեցին ավագանու ուղերձների,

ավագանու իրավասու մշտական հանձնաժողովում քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը (եզրակացությունը) տրամադրելու, հարցերի քննարկման ընթացքում հատկացվող ժամանակի, հարցը օրակարգից հանելու կարգի վերաբերյալ:
Առաջարկվեց հարցադրում կատարած ավագանու անդամի արձագանքի համար ևս տրամադրել 3 րոպե ժամանակ:

Կողմ-22 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.4-րդ կետի և 31-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Որոշել Աբովյան համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի նստավայրը՝ քաղաք Աբովյան, Բարեկամության հրապարակ 1:
2. Որոշել Աբովյան համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց հարցը և նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը ևս բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներից՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև վարչական ղեկավարները գործում են ավագանու սահմանած նստավայրում:
Ավագանու անդամների կողմից հարցեր հնչեցին նախագծով ներկայացված համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի հասցեների և հետագայում այն փոփոխության ենթարկելու հնարավորության վերաբերյալ:
Պատասխանվեց, որ ավագանու որոշմամբ կարող են փոփոխվել նստավայրերը:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ, 57-58-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Սահմանել Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալների, հայեցողական և վարչական պաշտոնների քանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների և օգնականների հաստիքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2022 թվականի հունվարի 3-ից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց հարցը և նշեց, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն ձևավորվել է Աբովյան բազմաբնակավայր համայնքը, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում, որոնց դրույթների պահանջը կատարելու համար անհրաժեշտություն է առաջացել նոր ձևավորված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանելու համայնքի ղեկավարի տեղակալների, հայեցողական և վարչական պաշտոնների հաստիքները: Ավագանու անդամների կողմից հարցեր հնչեցին համայնքի ղեկավարի առաջին տեղակալի և վարչական ղեկավարների պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ:
Պատասխանվեց, որ նախագծում ներկայացված վարձատրության մասով լուծումները կրում են ժամանակավոր բնույթ և գործելու են մինչև աշխատակազմի նոր հաստիքացուցակի հաստատումը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ա/

Լսեցին
ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ակտիվների և պարտավորությունների գույքագրման գործընթացը համարել անհետաձգելի պահանջ և թույլատրել գույքագրման և աշխատանքների

ձեռքբերումն իրականացնել մեկ անձից գնման ընթացակարգով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց հարցը և նշեց, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ համայնքի ակտիվներն ու պարտավորությունները ենթակա են պարտադիր գույքագրման վերակազմակերպման դեպքում:
Քանի որ համայնքների վերակազմակերպումը տեղի է ունեցել միավորման ձևով, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել իրականացնել համայնքի ակտիվների ու պարտավորությունների պարտադիր գույքագրում: Գույքագրումը անհրաժեշտ է սկսել միավորման գործընթացի սկզբի դրությամբ:
Համայնքների միավորման ռեֆորմի պահանջներից է եղել նաև, որ միավորվող համայնքների աշխատակազմերի գործունեությունը դադարեցնելու մասին աշխատակիցները ծանուցվեն նոր տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները ստանձնելուց հետո և երկու ամսվա ընթացքում ապահովեն միավորման գործընթացի սահուն և անցնցում իրականացումը: Ուստի պարտադիր գույքագրումը պետք է ավարտին հասցվի նշված ժամկետում:
Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն պարտադիր գույքագրման գործընթացը պետք է սկսել հանձնաժողովի ձևավորմամբ, որում պետք է ներգրավվեն նաև ավագանու անդամներ՝ քանի որ ավագանին է տնօրինում համայնքի գույքին: Իսկ ստեղծված իրավիճակում քանի դեռ նորընտիր ավագանին չէր ստանձնել լիազորությունները՝ անհնար էր սկսել գույքագրման գործընթացը:
Քանի որ տվյալ գույքագրումը պահանջում է հատուկ մասնագիտական հմտություններ, գիտելիքներ և առկա է աշխատանքների մեծ ծավալ, անհրաժեշտություն է առաջացել այդ աշխատանքները ձեռք բերել գնման ընթացակարգով՝ մասնագիտացված կազմակերպությունների միջոցով:
Հաշվի առնելով վերը նշված հագմանքները և խնդրի հրատապությունը, հնարավոր չէ գնումը կատարել մրցույթի կարգով:
«Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել:
Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ համայնքի կարիքների համար գնումները կարող են կատարվել համայնքի ավագանու որոշմամբ անհետաձգելի համարված դեպքերում կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով:
Հարցի շուրջ կայացած քննարկման արդյունքում որոշվեց նախագծի մեջ ավելացնել գույքագրման դրույթից բացի նաև հիմնական միջոցների վերագնահատման մասին դրույթը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7-Ա/

Լսեցին
ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 6-Ա որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու անդամ Դավիթ Զարոյանին նշանակել Աբովյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:
2. Աբովյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի գործառույթները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2022 թվականի հունվարի 3-ից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց հարցը և նշեց, որ օրենքի պահանջով համայնքի ղեկավարի տեղակալներին նշանակում է համայնքի ավագանին և ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից առաջարկված համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու Դավիթ Զարոյանի կենսագրական տվյալները:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8-Ա/

Լսեցին
ՆԻԿՈԼԱՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 6-Ա որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Նիկոլայ Աբրահամյանին նշանակել Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2. Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալի գործառույթները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2022 թվականի հունվարի 3-ից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից առաջարկված համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածու Նիկոլայ Աբրահամյանի կենսագրական տվյալները:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9-Ա/

Լսեցին
ԱՐԹՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 6-Ա որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Արթուր Մովսիսյանին նշանակել Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2. Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալի գործառույթները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2022 թվականի հունվարի 3-ից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից առաջարկված համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածու Արթուր Մովսիսյանի կենսագրական տվյալները:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի փետրվարի 08-ը՝ ժամը 11:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ _____

ՄԵՏԱՔՍՅԱ ԲԱԲԱՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ _____

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ _____

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ _____

ՍԵԹՐԱԿ ՍԵԹՐԱԿՅԱՆ _____

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ _____

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ _____

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ _____

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____